Հայաստանի Հանրապետություն
Республика Армения
Republic of Armenia
Արագածոտնի մարզի Բյուրական գյուղի Հովհաննես Թումանյանի անվան միջնակարգ դպրոց
ՊՈԱԿ
Марз Арагацотн, Основная школа им. Оганнеса Туманяна д. Бюракан ГНТО
Marz Aragatsotn v. Byurakan School named After Hovhannes Tumanyan SNCO

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագրի ամբողջական կամ միակողմանի լուծման մասին

«Ֆոտոն» ՍՊԸ-ի
Տնօրեն Ն. Պետրոսյանին
ք. Երևան, Ռոստոմի 58
ՀՎՀՀ՝ 90036001
Էլ.հասցե՝ ms.foton2014@mail.ru

Հարգելի՝ պարոն Պետրոսյանին

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԲՅՈՒՐԱԿԱՆԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «Ֆոտոն» ՍՊԸ-ի միջև (այսուհետ՝ Վաճառող) 28.07.2023թ.-ին կնքված ՀՀԱՄ-ԲՅՈՒՐԱԿԱՆ-ՄԴ-ԳՀԱՊՁԲ-23/02-02 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև Պայմանագիր/ շրջանակներում Վաճառողը ստանձնել է պարտավորություն մատակարարել Պայմանագրի Հավելված N1-ով սահմանված ապրանքները: Սակայն 24.11.2023թ.-ից խախտելով մատակարարման ժամկետները և պայմանագրով սահմանված դրույթները, չի պատասխանում հեռախոսազանգերին և չի մատակարարում պայմանագրով նախատեսված ապրանքները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով «ԲՅՈՒՐԱԿԱՆԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ը հարկադրված է 2023թ.-ի դեկտեմբերի 01-ից

Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծել: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողին տրվում է 10 աշխատանքային օր՝ որակավորման և պայմանագրի ապահովումները՝ համապատասխանաբար 10038.3 (տասը հազար երեսունութ ամբողջ երեք տասնորդական) ՀՀ դրամի և 6692.2 (վեց հազար վեց հարյուր իննսուն երկու ամբողջ երկու տասնորդական) ՀՀ դրամի չափով վճարելու համար: Փոխանցումը պետք է կատարել Գնորդի բանկային հաշվին /ՀՀ ֆինանսների նախարարություն Հ/Հ900448000266/:

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն «Ֆոտոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

ՀՀ Արագածոտնի մարզի <<Բյուրականի Հ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց>>
ՊՈԱԿ- տնօրեն՝

Լ.Մկրտչյան

01.12.2023թ.